

ՏԱՍՆ ԵՒ ԵՐԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ



Տարեկան զինը 10 բուր, կես տարեկանը 6 բուր:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և ասոն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
Իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կովկասեան ցուցա-
հանդէս. Նամակ կարօրց. Ներքին լուրեր.—
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—
ՀԵՌԱՊԵՐՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Բժշկի զրոյցնե-
րը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Ինչպէս ասեցինք, Կովկասեան ցուցահանդէսի
հետաքրքիր բաժիններից մէկը այն բաժինն է, ու-
րը պարունակում է իր մէջ պրօպագանդայի հա-
մար Ռուսաստանից և արտասահմանից մեզ մօտ
ուղարկված այլ և այլ գիւղատնտեսական մե-
քենաներն ու զործիքները:

Նախ աչել է ընկնում ցուցահանդէսի կաթնա-
տնտեսական բաժինը, որը զբաղւած է ֆալանիստ
երկու եղբայրների ղեկավարութեան տակ: Այդ-
տեղ զուր կը տեսնէք նախ այլ և այլ կատարե-
լագործված զործիքներ և մեքենաներ, որոնք
զործ են գրվում կաթնային տնտեսութեան և
պանրագործութեան մէջ, ինչպէս, օրինակ՝ սեր-
չինելու ամբիկական սիստեմի օրոգիով մեքե-
նան, պանրի պատրաստելու կաթնասն, շիշդացի
լաւարի նման՝ սեր կաթից զատ ու զ հետա-
քրքիր մեքենան, և այլն և այլն: Ապա ձեռք ցոյց
կը տան այլ և այլ զործիքներ, արէ օմէտը-
նեք, ինչպէս կովկասի արեօմէտը, Հերբէրի և
Շաֆֆերի զործիքները՝ կաթի յատկութիւնը, նրա
հուման չափը, նրա մէջ պարունակված ջրային
կամ ճարպային մասերի քանակութիւնը որոշելու
համար: Այդ բաժնում հանդէս են գրված թէ
տեղական և թէ օտար այլ և այլ պանիրների
տեսակների նմանքները, և այլն պանիրների օրի-
նակները, որ փորձում են, եւրօպական և ռու-
սաց պանիրների նմանութեամբ, մեզ մօտ էլ
պատրաստել: Այդտեղ հանդէս են գրված նմա-
նապէս այն պանիրների նմանքները, որ տեղա-
կան գիւղացիները թուրքերը, հայերը, զերմաս-
ցի գաղթականները և մայկականները, սկսել են
արդէն պատրաստել, հետեւելով կուչնիքախի շը-
վէցարական պանիրների պատրաստութեան՝ ձե-
ւին:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԺՇԿԻ ԶՐՈՅՑՆԵՐԸ

VIII

Գեղինֆեկցիական միջոցների զործարարութեան
կողմնակիցները.— Բնակարանների ղեկինֆեկցիան
ծծմբաթթուառով, խորով և սուղմայի ջրախառ-
նուրով.— Բնակարանի գեղինֆեկցիան, երբ հի-
ւանդը մէջն է.— Շոգիով գեղինֆեկցիան և մա-
ղիղդների գեղինֆեկցիան:

Այժմ խոսենք գեղինֆեկցիական միջոցների
զործարարութեան մասին, հետեւաբար պատմենք
վարակված բնակարաններին, հալոստի, անկողնի
և ընդհանրապէս վարակված հիւանդների հետ
որ և իցէ կեղտ յարաբերութիւն ունեցող այլ և
այլ առարկաների և մարդկանցիկների գեղինֆեկցիա-
յի մասին, և վերջը կը խոսենք հիւանդներից ար-
տաղիքած նիւթերի.— խորի, մէղի և զլուաւորա-
պէս կղզիանք.— գեղինֆեկցիան:

Բնակարանները գեղինֆեկցիա անելու համար
զործ են անում ծծմբաթթուառով և այլ հեղուկա-
նիւթ խառնուրդները՝ զլուաւորապէս սուղման
ձրանալուց աւելի զործարարելի է ծծմբաթթու-
առով, իսկ Գիւրմանիայում, Աստորիայում և Ռու-

կաթնատնտեսական և պանրագործական բաժ-
նի կողքին գտնվում է գիւղատնտեսական այլ և
այլ մեքենաների ընդարձակ բաժինը: Այդտեղ ի-
րանց վրա ուղարկութիւն են դարձնում զլուաւ-
րապէս այն գիւղատնտեսական կատարելագործ-
ված մեքենաները, որոնք մեզ մօտ բերված են
Թուսաստանից և թէ արտասահմանից: Այդ-
տեղ կը տեսնէք զերմասցի լինիլի սիստեմա-
յի (վէտշառից) արօրներ, սերմ իստակող, սերմ
մանրացնող և այլ մեքենաներ, նմանապէս էլ-
կերտի Բերլինի ֆաբրիկայի արօրներ, ցանկու-
կալուրու, սերմ մանրացնելու ձեռնաշարժ և շոգե-
շարժ մեքենաներ, խոտի համար մամուլներ և այ-
լն և այլն:

Ցանկալի կը լինէր որ մեր տեղական թէ կա-
ւածատերերը և թէ գիւղական համայնքները
ձեռք բերէին այդ տեսակ կատարելագործված
մեքենաները: Այդ մեքենաների մեծ մասը բաւա-
կան թիւով են և այդ պատճառով անհատների
համար նրանց առնելը դուրս է մատչելի չէ: Այդ
պատճառով ցանկալի է որ մեր թէ գիւղացիները
և թէ կաւածատերերը համայնական ոյժերով, ըն-
կերակցութեամբ՝ առնէին այդ տեսակ կատարե-
լագործված մեքենաները: Մենք լսում ենք որ
այդ մեքենաներից մի քանիսն, յատկապէս ձե-
ռաշարժ, աւելի էժան մեքենաներ, արդէն սկսել
են առնել ոչ թէ միայն մեր երկրի կաւածա-
տերներն ու գերմանացի գաղթականները, բայց
և մեր հայ, ռուս, մայկական, զուլտօրօր և նոյն
իսկ թուրք գիւղացիները:

Հետաքրքիր է շատ և պետական կաւածաների
միջնաբերդեան պալիլիօնը, որտեղ զբաղւած է
մրդեր և բանջարեղէնների չորացնող մեքենան:
Այդ մեքենայի կազմակերպութիւնն ու գործողու-
թիւնը բացատրում է այցելունքին գիւղատնտե-
սութեան տեսուչ պ. Չերեխով, որը դրա համար
յատկապէս նշանակված ժամերին անվարձ դա-
սախտութիւններ և կարգում յիշեալ պալիլիօ-
նում: Պալիլիօնում ցոյց են տրվում վորդերի և
գեղեցիկ ձեռնաշարժ զործիքներ, որոնց միջոցով
նախ, մի ակնթարթում, խտակում են իրանց կե-
ղիկը՝ խնձորը, տանձը, դեղձը և այլն, ապա մի
այլ փորձի մեքենայ որը մի վայրկեանում հա-
նում է իստակված խնձորից նրա միջուկը իր
սերմերով, վերջապէս մի երրորդ մեքենայ, որը
վայրկեանապէս հաւասար կտորներով վրա է բա-
ժանում խնձորը: Այդ ձևով պատրաստած միջոց

ստանալով սուղման: Պատմենք դրանց զործա-
ծելու եղանակները:

Ծծմբաթթուառ կարելի է ստանալ այլ և այլ
ծծումբ պարունակող նիւթերից, բայց ամենադի-
ւին և աւելի էժան է այդ գաղը ստանալ ուղղա-
կի ծծումբի այրելուց: Նախ և առաջ հարկաւոր
է որոշել գեղինֆեկցիային նմանակող բնակա-
րանի—սենեակի ծաւալը. դրա համար պիտի
չափել սենեակի երկարութիւնը, լայնութիւնը և
բարձրութիւնը, այդ երեք թիւերը միմեանց վրա
բազմապատկել և ստացած արտադրաբեր ցոյց
կը տայ սենեակի ծաւալը, որ մեզ հարկաւոր է
ծծմբաթթուառ.— գաղ ստանալու՝ ծծումբի քա-
նակութիւնը որոշելու համար: Փորձելը հաստա-
տում են, որ մի խորանարդ սածին տարածու-
թեան մէջ պարունակվող հիւանդածին նիւթերը
արմատախլ անելու համար պահանջվում է մօ-
տաւորապէս կէս ֆունտ ծծումբ այրել: Գիտե՞ք
սենեակի երկարութիւնը 3 սաժն է, բարձրու-
թիւնը սաժնն ու կէս, իսկ լայնութիւնը 2 սա-
ժնն. ուրեմն սենեակի ծաւալը հաշուաւոր է 9
խորանարդ սաժնի, ուրեմն չորս ու կէս ֆունտ
ծծումբ կը հարկաւորվի այրել ծծմբաթթուառ
գաղ ստանալու համար:

Բոլոր վարակված նիւթերը և ընդհանրապէս
հիւանդի բնակարանի մէջ գտնված բոլոր ա-
ռարկաները տեղաւորում են յատակի կամ
սեղանների վրա, իսկ չորեղէնները, սպիտա-
կեղէնները փուռն են սենեակի պատերի մէջ կա-

տնիջապէս դրվում է միջոց-չորացնող հնոցը:
Այդ մեքենան բաղկացած է մի ենկայն և թէք
ուղղութիւն ունեցող երկաթէ արկղից, որի մի
ծայրին յարմարեցրած է մի վառարան, որից
տաքութիւնը հետզհետէ բարձրանում է արկղի
մէջ, իսկ այդ արկղում պահարանների պէս դար-
ված են չորանակների մէջ դրված մաղեր, որոնց
վրա և դնում են մրգեր կամ բանջարեղէններ
չորացնելու համար:

Մրդեր և բանջարեղէններ չորացնելու այս ձեռ-
անհամեմատ աւելի աջող արդիւնք է տալիս,
քան թէ մեր երկրի նահապետական ձեռք՝ մրդերն
ու բանջարեղէններ դեռնի վրա, արեգակի ճա-
ռաղայթների տակ չորացնելու: Չորացնող մեքե-
նայի միջոցով ստացվում է մաքուր, համեղ, ա-
նուշահոտութիւնը պահպանած մրդեր ու բանջա-
րը,—այն ինչ մեր նահապետական ձեռք չորաց-
նելով՝ մենք ստանում ենք անհամ, քարի պէս
պինդ, անուշահոտութիւնից զուրկ, վերին աստի-
ճանի անմաքուր արդիւնքներ:

Գ. Ա.

ՆԱՄԱԿ ԿԱՐՈՒՅ

Սեպտեմբերի 24-ին

«Громъ не грянетъ, мужикъ не перекреститъ»
ասում է ռուսական առածը: Եւ արդարեւ,
մեր ժողովուրդը արթնանում, սթափվում, յուզ-
վում է միայն այն ժամանակ, երբ վտանգը ակն-
յայտի կերպով պատկերանում է նրա աչքերի
առաջ: Փորձելը անցելով դասից, սպասվող չա-
րիքի առաջն առնել չը կայ մեր մէջ: Կարեցին
խրաքանչիւր տարի՝ զարուհը բացվելու միջոցին,
մի ամսի չափ անցնում է սարսափի և տագնապի
մէջ: Տառ-Բողազի ջուրը իւրաքանչիւր օր կարող
է ողողել քաղաքը և գլխի վրա հասցնել ինչ-
պէս արդէն պատահել է անցեալ տարիներում:
Չորը՝ անզուսպ ոյժով յարձակվել է քաղաքի
վրա և իր ամենակործան յորձանքների հետ տա-
րիկ կարեցեալ ունեցածը. իսկ այդ միջոցին, ան-
հոգ մարդը հեռու կանգնած, յուսահատօրէն նա-
յել է հոգ տարելիքի աւերիչ զործողութիւններին:
Խրաքանչիւր տարի՝ զարնան ակղըն՝ կարեցին
սարսափի մի պէրիօդ է անցկացնում, իսկ յետոյ
մինչև հետեւեալ տարին, նա դարձեալ անուշաղբ
է թողնում վտանգի սպասելիքը, և այդպէս
չարունակվում է տարուց տարի: Այժմ, չը դի-

պած պարանների վրա, բուխարի կամ վառարա-
նի անցքերը լաւ ամրապնդում են, դռները և
պատուհանները թղթում են, թողնելով միայն դը-
ռան մի կէտը առժամանակ բաց: Սենեակի մէջ-
տեղը դնում են երկաթեայ մի մեծ թիթեղ, որի
վրա մի մաղալ են դնում և կամ աղիւններից,
ձաղարածն վեց վերջով խորութեամբ մի հնոց
են պատրաստում, ի հարկէ, մի և նոյն ժամա-
նակ, հրդէհ չը պատահելու համար, ամենայն
զուրկութիւններ են զործ դնում.— թղթելը, չո-
րեղէնները և միւս զուրկաւոր իրեղէնները որքան
կարելի է մաղալից կամ ժամանակաւոր հնոցից
հեռու են տեղաւորում, այնուհետեւ ձաղարածն
փոխի մէջ (կամ մաղալի) որոշեալ քանակու-
թեամբ ծծումբ են դնում և ծծմբի մակերեսով
վրա սպիտ են անում: Ապրիլի վառում են և
չուտափողով դուրս են գալիս սենեակից իրարաց
դռնով, և չուտով այդ կիտարաց դուռը փակում
և թղթում են: Ծծումբը սկսում է վառվել.— ծը-
ծմբաթթուառի դաղ առաջացնելով, որը և լց-
վելով սենեակի մէջ՝ իր գեղինֆեկցիական յատ-
կութեամբ արմատախլել է ամուս սենեակի մէջ
գտնված բոլոր վարակիչ նիւթերը: 24 ժամից
յետոյ, բայց են անում դռները և պատուհանները
ու կանոնաւոր հոգմահարում են սենեակը, այ-
նուհետեւ միայն կարելի է մանկ բնակարանը:

Քանի որ գեղինֆեկցիային նմանակող բնա-
կարանի-սենեակի այլ և այլ անցքերը լաւ են
ամրապնդած, ի հարկէ, ծծմբաթթուառի դե-

տենք ինչ նպատակով, այն ջրանցքը, որի միջո-
ցով Տառ-Բողազի լճացած ջուրը, զարնան մի-
երկու ամիսների ընթացքում, հոսում և թափ-
վում էր Կարո-չայի մէջ, գրեթէ փակվում է, նրա
մէջտեղը բարձրանում են նորայնէն կրպակների
պատեր, այլ տեղերում ջրանցքը լցվում է հողով
և անմաքուր ջրաներով. ձմեռը արդէն մօտ է և
նրանից յետոյ էլ վրա կը հասնի ձիւների ջուրը.
Տառ-Բողազի ժամանակաւոր լճի ջրերը կուտակ-
վելով ու անցք չը գտնելով ընթանալու, մի օր
կատաղի բռնութեամբ ներս պէտք է հոսեն հին
բերդի մէջ և սրբեն տանէն քանդակ տեսնու
նրանց մէջինները: Գա ցերեկվայ լոյսի պէս պարզ
է, բայց և անպէտ, ոչ ոք չէ հոգում այդ մասին,
քաղաքացիներից ոչ ոք չէ էլ հարցնում թէ ինչ
կը լինի այդպիսի ինքնապահուծական հետեւեղը:
Քանի որ մեր ժողովուրդը ապագայի մասին այդ-
բան պախարակելի անհոգութիւն է ցոյց տալիս
և միմիարվում է «գոցեց»-ների մոտի յոյսերով,
ցանկալի էր որ դոնէ գտնուր բացվելուն պէս
բերդի մէջ գտնված տները մի մասը դատարկվէր,
անխուսափելի վտանգից խուսափելու համար:—
Կարսի մէջ շինութիւնները չարունակվում են օ-
րինակելի եռանդով, հին շինութիւնները անխնայ
քանդվում են և քաղաքը այս րօպէիս մի արհես-
տանոցի է նման. ամենուրեք քար ու կիր թա-
փած, ամենուրեք գործունէութիւն: Մի քանի
տարուց յետոյ, Կարսը կը լինի մի շքեղ քաղաք:

Տեղիս հայոց նոր շինվելի եկեղեցու յատկա-
գիծը արդէն ստացված է ճարտարապետից, մի և
նոյն ժամանակ յայտնված է հողեր կառավու-
թեանը, որ եթէ առաջիկայ տարւոյ զարնանը
չեն ձեռնարկի այդ եկեղեցու շինութիւնը, այն
ժամանակ տեղը կը իւրի հողեր իշխանութեան
ձեռքից: Այդ իսկ պատճառով զարնանը կը ըս-
կալի եկեղեցու նոր շինութիւնը, նրա հետ միա-
ժամանակ կարելի է հիմնարկել և ուսումնարանի
նոր շէնքը, եթէ միայն կովկասեան Բարեգործա-
կան ընկերութեան խորհուրդը բարեհաճի տալ
այն 5000 ռ. դրամաւորութեւ, որ պահվում է խոր-
հրդի տնօրէնութեան տակ, տեղիս հայոց ուսում-
նարանների անուսով անշարժ կաւուածքները դը-
նելու նպատակով: Հէնց այդ դրամով մտադրու-
թիւն կայ կառուցանել եկեղեցու գաւթում մի
շարք կրպակներ, որոնց եկամուտով կարողանա-
ր թիթեանալ ուսումնարանի ծախսը: Եւ ժամանակ
է, քանի որ հին ուսումնարանը՝ իր ցած ու մտք

ղինֆեկցիական աղբեցութիւնը յարաբերաբար
հիմնաւոր և արդիւնաւոր է լինում, ուրեմն որ-
քան կարելի է պիտի աշխատել սենեակը լաւ
ամրապնդել: Վարակված սենեակը ծծմբի ծուխով
մաքրելը և այն առաւելութիւնը ունի, որ սե-
նեակի մէջ կարելի է թողնել կահ-կարանքներ,
անկողնի բոլոր պարագաները, այնպէս որ ծծմ-
բաթթուառը իր սաստիկ թափանցիկ ոյժով կա-
րողանում է ներգործել տեղաշարի, ներքնակ-
ների մէջ ևս: Փորձելից երևում է որ ընդհա-
րապէս հիւսուածքները (ТКАНЬ) ծծմբաթթուառի
աղբեցութիւնից չեն փրկվում կամ փչանում,
միայն մետաղեղէն առարկաներն են փչանում
և այդ պատճառով հարկաւոր է մետաղեղէն ա-
ռարկաների վրա առաջաց վաղ և ինչ քանի:

Ծծմբաթթուառ գաղի գեղինֆեկցիական զօ-
րութիւնը աւելի սաստկացնելու համար ոմանք
առաջարկում են, վարակված սենեակի օդը ծը-
ծումբ ծխելուց առաջ խոնաւացնել: Սենեակը խո-
նաւացնել կարելի է այլ և այլ միջոցներով.— կա-
րելի է պատերի վրա սպռնագով ջուր լցել, կամ
պատերի, յատակի և առաստաղի վրա ջուր
ցանել և կամ օդաղկի գեղինֆեկցիայից ա-
ռաջ՝ մի քանի տալ եռացող ինքնաւոր թողնել
սենեակի մէջ: Զձմարվում է սենեակը աւելի
խոնաւացնելով մենք աւելի լաւ հետեւեղներ
կարող ենք ստանալ, որովհետեւ ծծմբաթթուառը
օդի խոնաւութեան հետ խառնվելով՝ աւելի սաս-
տիկ գեղինֆեկցիական զօրութիւն է ստանում,

Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. 83.